



Քաղ.գործ թիվ ՇԴ/0701/02/13

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

<<21>> նոյեմբերի 2013թ.

ք.Գյումրի

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ	
նախագահությամբ՝ դատավոր	Լիլիթ Խաչատրյանի
քարտուղարությամբ՝	Գայանե Հարությունյանի
մասնակցությամբ՝	
հայցվոր՝	Ա.Նիկոլյանի
	Հ.Նիկոլյանի
	Կ.Նիկոլյանի
հայցվորների ներկ.՝	Ա.Հովսեփյանի
պատասխանողի ներկ.՝	Ա.Գյունաշյանի

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Հովհաննես Յուլակի Նիկոլյանի (ծնված՝ 18.10.1954թ., անձնագիր՝ AE 0281000, տրված՝ 12.03.1999թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Անի թաղ., 15 փող., 15 շենք, բն. 1 հասցեում), Կարինե Սարգսի Նիկոլյանի (ծնված՝ 17.11.1957թ. անձնագիր՝ AE 0307016, տրված՝ 13.03.1999թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Անի թաղ., 15 փող., 15 շենք, բն. 1 հասցեում), Արտաշես Հովհաննեսի Նիկոլյանի (ծնված՝ 03.10.1980թ., անձնագիր՝ AM 0865090, տրված՝ 11.09.2012թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Անի թաղ., 15 փող., 15 շենք, բն. 1 հասցեում), Նարինե Հովհաննեսի Նիկոլյանի (ծնված՝ 07.01.1984թ., անձնագիր՝ AE 0656712, տրված՝ 24.08.2000թ. 16-ի կողմից, հաշվառված՝ ք. Երևան, Պ.Սևակ փող., 1/1 շենք, բն. 23 հասցեում) ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի (ՀՎՀՀ՝ 05511159, պետական գրանցման վկայական՝ 002079, հասցեն՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1), ՀՀ Շիրակի մարզպետարանի՝ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասին.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Հովհաննես Յուլակի Նիկոլյանը, Կարինե Սարգսի Նիկոլյանը, Արտաշես Հովհաննեսի Նիկոլյանը և Նարինե Հովհաննեսի Նիկոլյանը 2013 թվականի հուլիսի 13-ին հայց են ներկայացրել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի՝ Գյումրի քաղաքի Անի թաղամասի 15 փողոցի 15 շենքի թիվ 1-ին բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջով:

Հայցադիմումը 17.07.2013 թվականին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ընդունվել է վարույթ:

29.07.2013թ. գործով պատասխանող Գյումրու քաղաքապետարանի ներկայացուցիչը դատարան է ներկայացրել հայցադիմումի պատասխան: